



ՏԱՐԲԵՐԱԿ 21

լեզուական ուղեցոյց

Տարբերակ 21-ը արեւմտահայերէն առցանց հարթակ մըն է, որ իր տարածքը կը տրամադրէ անոր մէջ տեղ գտած տարբեր ուղղութիւններով ստեղծագործելի փափաքողներուն:

Նկատի առնելով արեւմտահայերէնի չհամակարգուած կարգավիճակը եւ անոր գործածութեան բազմազան ձեւերը, խմբագրական կազմը իր աշխատակիցներուն եւ ընդհանրապէս հետաքրքրուողներուն տրամադրութեան տակ կը դնէ լեզուական այս ուղեցոյցը՝ կայքէջին լեզուն համակարգելու նպատակով:

Նշենք որ որոշ կէտերու պարագային կրնան ըլլալ մէկէ աւելի կարծիքներ, զորս չենք ժխտեր, սակայն կ'առաջնորդուինք հետեւեալ տարբերակով:

Բովանդակութիւն

Ձեւաչափային.....	2
Լեզուամտածողութիւն	3
Բառակազմութիւն.....	4
Օտար բառերէ տառադարձութիւններ	6
Մանր-մունր՝ բայց կարելոր	7
Գրաբար բառեր, ոճեր եւ ասոյթներ.....	9

Ձեռագրափայլին

- Գրել «ԵԼ», եւ ոչ «Լ»:
- **ՍՆ-ի** եւ ոչ ՍՆի (գծիկով անջատել):
- **1-9 բառերով գրել**, (օրինակ՝ **չորս** հոգի, **ինը** հատ դեղծ) իսկ մնացեալը՝ թուանշաններով:
- Արուեստի գործերու վերնագիրներուն իւրաքանչիւր բառը գլխագրել, օրինակ՝ «Կարմիր ժամուց»:
- Ամիսները գլխագրել, օրինակ՝ Յունիս:
- **Օտար** բառերը գրել **շեղագիր** (օրինակ՝ *պիսիքլէթ*), իսկ անոր յաջորդող **հոլովական ու յոգնակերտ վերջաւորութիւններ եւ յօդերը՝ ուղղագիր** (օրինակ՝ *պիսիքլէթին, պիսիքլէթներ, պիսիքլէթը*):
- **Գլխագրել** բառակապակցութիւն կազմող հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու անուններուն իւրաքանչիւր բառը, օրինակ՝ **Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն**:
- Պատմական նշանակութիւն ունեցող թուականները **թուանշաններով գրել**, օրինակ՝ **Մայիս 1, Ապրիլ 24**:
- «Այո՛»,» եւ «ո՛չ»,» երբ կոչական են՝ շեշտով եւ ստորակէտով:
- Հաստատութիւններու անուններու կրճատումը առանց կետի, օրինակ՝ **ՄԱԿ, ՀՄԸՄ, ՀԵԸ**, եւ այլն:
- Միացեալ Նահանգներ՝ եզակի^օ, թե՛ յոգնակի: Գրել միշտ եզակի:
- Երբ կարենալ բային վրայ կ'աւելնայ ուրիշ բայ մը, այս աւելցողը անփոփոխ կը մնայ, եւ բոլոր փոփոխութիւնները կը կրէ միայն կարենալ բայը. օրինակ՝ «Կառավարութիւնը մշակած է ծրագիրը՝ նիւթական օժանդակութիւն ապահովել կարենալու», եւ ոչ թէ «կարենալ ապահովելու»:
- **Այլ** դերանունը կրող գոյականը չի կրնար որոշիչ յօդ ունենալ, օրինակ՝ այլ **աչեր**, այլ **քաղաք**, այլ տուն, այլ **յօդուած**, այլ **վարչակարգ** եւ այլն: Ուրեմն՝ այլ պետութիւններուն՝ առանց **և**-ի:
- Արդի արեւմտահայերէն գրողին համար շփոթի մնայուն առարկայ կը հանդիսանան թիւերը, մասնաւորաբար 7-8-9-10-ի գրաւոր արտայայտութիւնները՝ պարզ թէ բաղադրեալ կառոյցներու մէջ. Այս հակումին բերումով ալ նշուած թիւերը աշխարհաբար անցած են հետեւեալ կազմով՝ **եօթը, ութ, ինը, տասը**: **Ութ** բառը, ուրեմն, կը գրուի առանց **ը**-ի կամ **և**-ի:

Լեզուամտածողութիւն

- Չգործածել արեւելահայերէնի «արդիւնքում» բառէն եկած «արդիւնքին» դարձուածքը: Օրինակ՝ «Մենք մեր սերն ու զգացումները սխալ կը դրսեւորենք. արդիւնքին կը տուժեն երեխաները»: Արդիւնքին փոխարէն ըսել՝ **ուստի կամ հետեւաբար**:
- Չշփոթել **տիկին** մակդիրը կողակից **կին** գոյականին հետ: Օրինակ՝ սխալ է ըսել **վարչապետը եւ իր տիկինը** ներկայ գտնուած են...ճիշդ պիտի ըլլայ ըսել **«վարչապետը եւ իր կինը** ներկայ գտնուած են...», եւ օրինակ՝ դիմաւորուած **տիկին Փառանձեմին** կողմէ:
- **Հանդիպիլ** բայը արեւմտահայերէնի մէջ ոչ մէկ տեղ կը կիրարկուի **հետ** յետադրութեամբ: Օրինակ՝ չենք ըսեր...ուր հանդիպած են **բնակիչներուն հետ**, այլ ...ուր հանդիպած են **բնակիչներուն**:
- Խուսափիլ **վերաբերող** կամ **վերաբերեալ** բառերուն գործածութենէն: Ձևջէ՛րով զանոնք, կը նշմարենք, թէ ոչինչ կը պակսի մտքի յստակութենէն: Օրինակ՝ «Անդրադարձ կատարուեցաւ Արցախի զարգացման **վերաբերող** ծրագիրներուն» փոխարէն շատ պարզ կարելի է ըսել «Անդրադարձ կատարուեցաւ Արցախի զարգացման **ծրագիրներուն**»:
- «**Իբրեւ հետեւանք**»ը ռուսաբանութիւն է: Հայերէն համարժեքն է **հետեւանքով**, օրինակ՝ «Համաճարակի **հետեւանքով**...»:
- **Պատգամը** (առարկայ չէ) **չեն փոխանցեր**, այլ պատգամը **կը յղեն, կ'ուղղեն, կու տան**:
- Հարց մը չի կրնար հետաքրքրութիւն **ունենալ**, քանզի հետաքրքրութիւնը յատուկ է բանաւոր եակին, այսինքն՝ մարդուն: Հարցը մը կրնայ, սակայն, հետաքրքրութիւն **ներկայացնել, յառաջացնել, արթնցնել, պատճառել, ստեղծել...:**
- **Հայերէնը չունի որեւէ նախածանց**, որ միութեան գծիկով միանայ ածանցեալ բառին: Հետեւաբար չի գրուիր փոխ-տեսուչ, միջ-կրօնական, միջ-եկեղեցական, այլ՝ փոխտեսուչ, միջկրօնական, միջեկեղեցական:
- Հայերէնը ամսանունին եւ տարեթիւին միջեւ ստորակետ չի դնէր:
- **Պարտադրել** բային խնդիրը **վրայ** յետադրութիւնը չի պահանջեր:
- Չգործածել թրքերէնէ բառացի թարգմանութիւն **«Չուր տեղ չեր»**ը, այլ ըսել՝ «ի գուր չեր»:
- Չգրել «այս մրցաշարքը իր **տեսակով** բացառիկ է», այլ՝ «այս մրցաշարքը **իր տեսակին մէջ** բացառիկ է»:

- Չգրել «մրցաշարքը պիտի կայանայ երկու **հանգրուանով**: Մրցաշարք մը կը կայանայ ըստ փուլերու, այսինքն՝ փուլերու բաժնուելով: Այդ փուլերուն միջեւ ինկող հանգիստի, անգործութեան, անշարժութեան միջոցներն են որ կը կոչուին հանգրուան: Հանգրուան կը կոչուի նաեւ...գերեզմանը, վերջին ու մեծագոյն հանգիստը, դադարը, հանգրուանը:
- Յարձակիլ բային ինդիքը կարելի չէ կազմել դեմ յետադրութեամբ. օրինակ՝ երկու նաւերուն դեմ յարձակում: Հայերէնի քերականութիւնը կը պահանջէ, որ ըսենք յարձակիլ բանի մը կամ մէկու մը վրայ, ուրեմն նաեւ՝ յարձակում բանի մը կամ մէկու մը վրայ, բայց ո՛չ դեմ:
- Տեղեակ-անտեղեակ-տեղեկանալ-տեղեակ դառնալ, տեղեակ պահել **բանի մը եւ ոչ բանէ մը**:
- Չգրել Կիպրոսի դեսպանը Շուէտի **մօտ**, այլ՝ Կիպրոսի դեսպանը Շուէտի **մէջ**:
- Ռուսաբանութիւն է **ցանկացած**-ը, որուն հայերէնն է՝ **որեւէ**:
- Corona virus-ի մասին: Կեդրոնական քոլորովին հայեցի մտածուած եզրերուն վրայ. թագաժահր, թագավարակ, պսակաժահր, պսակածել ժահր, պսակածել վարակ: Միայն պսակածել ժահր եւ պսակածել վարակ կը գոհացնեն մեր պահանջը:
- «**Յետ այսու**» չգործածել, որովհետեւ հայերէն չէ՝ ո՛չ գրաբար, ո՛չ աշխարհաբար: Հայերէն են՝ **այսուհետեւ, այդուհետեւ, այնուհետեւ** կամ՝ **ասկէ ետք**:
- **Մօտս** դրամ չունիմ, Արամին **մօտ** քնացայ-ի փոխարէն ըսել՝ **քովս** դրամ չունիմ, դրամ չունիմ, Արամին **տունը** քնացայ:
- **Տեղեակ ոճիրէն**-ի փոխարէն գործածել Տեղեակ ոճիրին, տեղեկանալ ոճիրին, ոստիկաններէն տեղեկանալ ոճիրին:

Բառակազմութիւն

- Աշխարհաբարը կը ճանչնայ **ամառ** սկզբնածէրը, որ կու տայ **ամառ+անոց** եւ **ամռան**: Ուր ո>ր հնչիւնափոխութեան ոչ մէկ օրէնք կը գործէ՝ գէթ այս ծիրէն ներս. օրինակ՝ **բեռ-բեռան, բուռ-բռին, թոռ-թոռան, ծոռ-ծոռան, նուռ-նռան, փուռ-փռան** եւ այլն: Ունինք նաեւ՝ **դուռ-դռան, լեռ-լեռան, ձմեռ-ձմռան, մատուռ-մատռան** կամ աւելի բարեհունչը՝ **մատուռին**:
- **Դեղ** բառը գրաբարեան կանոններով ունի յոգնակի մը, որն է **դեղորայք**, եւ ոչ **դեղօրայք**:

○ **Պայթում-պայթիւն:** Պայթում-ը պայթելու գործողութիւնն է. պայթիւն-ը պայթումին յառաջացուցած աղմուկն է: Նոյն տրամաբանութեամբ՝

Բախում	Բախիւն
Հնչում	Հնչիւն
Շաչում	Շաչիւն
Գոչում	Գոչիւն

○ Ուշադիր ըլլալ որ **յանձին** եզակի է, իսկ անոր յոգնակին է **յանձինս**:

○ Հայերէնը -ոն ածանց չունի: Այլ միայն -օն: Ասով կազմուած են մօտ մէկուկէս տասնեակ բառեր, որոնք ընդհանրապէս գոյականներ են, այսպէս՝ **բրդօն, բրտօն, գեղօն, գողօն, գործօն, թողօն, ծամօն, կոփօն, կրծօն, կտրօն, կռծօն, կրօն, մղօն, շրջօն, պաշտօն**:

○ **օրուընէ, տարուընէ, ժամանակուընէ** - Գրաբարը **օրէ(ն)** կ'ըսեր, ինչո՞ւ չվերադառնալ գրաբարին եւ չըսել՝ **օրէ, տարիէ, ժամանակէ, ատենէ, այսօրէ, երէկէ**, այսպէս ալ ժամանակ ցոյց տուող միւս բառերով:

Մենք շատ դիւրաւ կ'ըսենք՝ «**երէկէն** այսօր...մեծահարուստ դարձաւ»:

Ուրեմն՝ **օր-օրուան-օրէ-օրով ... տարի-տարուան-տարիէ-տարիով**

Հաւանաբար միակ բացառութիւնը պէտք է նկատել **վաղը-վաղուան-վաղուընէ-վաղուանով** յարացոյցը, որովհետեւ այլապէս ալ բացառիկ է այս բառը, որ կը վերջանայ «ը» ձայնաւորով, որ բնաւ սովորական չէ հայերէնին:

○ Յոգնակիի կազմութեան մեջ՝ **Միջակետներ, ստորակետներ, ժամկետներ, մեկնակետներու փոխարէն գրել՝ միջակետեր, ստորակետեր, ժամկետեր, մեկնակետեր. բացառ.՝ տեսակետներ**

○ Իրերօգնութիւն եւ իրարօգնութիւն. այս երկու ձեւերն ալ աւելի կամ պակաս կը կիրարկուին:

○ Գրել **հետագայ**, երբեք՝ **յետագայ**: Ամէն անգամ որ արդի հայը կը փափաքի ըսել **ետեւէն եկող, յետոյ գալիք, հետեւելիք** եւ նմանները, ան իսկոյն կը կառչի յետ արմատին, որ իրեն կը թելադրէ յետոյ մակբայը, իսկ երբ նոյն յետ արմատը կը կցուի բայարմատի մը, ան կը կորսնցնէ ժամանակային իմաստը եւ կը ստանայ տեղական իմաստ. կը նշանակէ **ետեւ. օրինակ՝**

Յետադաս	-ետեւը դասուած, շարուած, դրուած
Յետադարձ	-ետեւ դարձած

Յետամնաց	-ետելը մնացած
Յետընթաց	-ետել ընթացող
Յետահայեաց	-ետել հայող, նայող
Յետադիմական	-դէպի ետել դիմող
Յետսապահ	-ետելի դիրքերը պահող

Իսկ եթէ այս արմատը դնենք **գալ** բային վրայ, այսինքն՝ յետագայ, ան պիտի նշանակէ «ետել եկող, ետել ընթացող, դէպի ետել ուղղուող», այլ խօսքով՝ ճիշդ հակառակը իմաստին:

○ Բարի դրացիական- **բարի դրացի** բառակապակցութիւնը կու տայ **բարիդրացիական** ածականը՝ մէկ բառ որպէս:

Նմանապէս՝

Ձեռք բերել	-ծեռքբերում,
Փոքր Ասիա	-փոքրասիական
Սուրբ գիրք	-սուրգրային,
Սուրբ ծնունդ	-սուրբծննդեան
Կարմիր բանակ	-կամիրբանակային
Փոխ առնել	-փոխառութիւն


Պետք է նկատել, որ այս պարագային յատուկ անունները կը չքանան:

Օտար բառերէ տառադարձութիւններ

- Օտար բառերուն մէջի «օ» հնչիւնը միշտ «ո»ով տառադարձել, օրինակ՝ օթոմոպիլ: Իսկ բառին վերջը միշտ «օ» գրել, օրինակ՝ օթօ:
- Օտար բառերուն մէջ «ե (է/է)» հնչիւնը միշտ «ե»ով տառադարձել, օրինակ՝ Մերսեդես:
- Օտար բառերուն սկիզբը «ր» հնչիւնը միշտ «ռ»ով տառադարձել, օրինակ՝ Ռիմինի, ռոմանս: Իսկ բառերուն մէջ «ր»ով տառադարձել, օրինակ՝ Պերլին: Հայերէնի «ն»էն առաջ «ռ»ի կանոնը պահել, օրինակ՝ Պեռն:
- Օտար բառերուն մէջ «տ» հնչիւնը միշտ «թ»ով տառադարձել: Օրինակ՝ օթօ, մեթօ: Այս կանոնը կրնայ տարբերիլ որոշ յատուկ անուններու պարագային: Մինչ «Աթալանթա»ն եւ «Թորոնթօ»ն «թ»ով կը գրուի՝ «Դամասկոս»ն ու «Դնեպր»ը «դ»ով:

- Օտար պարզ բառերուն մեջ «c/k/q» հնչիւնը միշտ «ք»ով տառադարձել, օրինակ՝ մաքարոն: Իսկ յատուկ անուններու պարագային «c» տառադարձել «զ»ով (Canada/Գանատա) եւ «k/q» տառադարձել «ք»ով (Kirkuk/Քերքուք, Iraq/Իրաք):

Մանր-մունր՝ բայց կարելոր



Ա	
Ակնոցներս դրի (յոզնակի՝ սխալ)	Ակնոցս դրի (ճիշդը՝ եզակի)
Աղիտալի, աղիտահար, աղիտեալ	Աղետալի, աղետահար, աղետեալ
Ամարանոց, ձմերանոց	Ամառանոց, ձմեռանոց
Ամսեկան, օրեկան	Ամսական, օրական
Այսինչին փոխանցմամբ(ումով)	Ըստ այսինչին՝
Այցեգիր	Այցագիր
Աներհայր, աներմայր	Աներ, զոքանչ
Անծիք	Անծինք, անծեր
Անոյշ, աշխոյժ, նմոյշ, բոյժ, ոյժ...	Անուշ, աշխուժ, նմուշ, բուժ, ուժ...
Անպատրաստից	Յանպատրաստից
Առանց զէնքերու, սահմաններու	Առանց զէնքի, սահմանի(միշտ եզակի)
Առաջին Աշխարհամարտ	Առաջին աշխարհամարտ
Առընչութիւն	Առնչութիւն
Ատենուրնէ, օրուրնէ, մահուրնէ	Ատենէ(ն), օրէ(ն), մահէ(ն)
Բ	
Բազմիցս անգամ	Բազմիցս, բազմաթիւ անգամներ
Բզքտել	Բզկտել
Գ	
Գմբէթ	Գմբեթ
Գլխեբաց	Գլխաբաց

Դ

Դարեվերջ	Դարավերջ
Դարեւոր	Դարաւոր

Ե

Եղեգ, եղեգնեայ, եղեգնուտ	Եղեգ, եղեգնեայ, եղեգնուտ
Երաժշտական գործիք	Նուագարան (instrument de musique)
Երրեակ	Եռեակ
Եւայլն, Եւ	Եւ այլն

Զ

Չբօսաշրջիկութիւն(ային, ական)	Չբօսաշրջութիւն(ային, ական)
------------------------------	----------------------------

Թ

Թաղեկից	Թաղակից
Թատրերգութիւն	Թատերգութիւն

Ի

Ի գուր սպասում	Չուր սպասում
Ինչո՞ւ համար	Ինչո՞ւ, բայց՝ ինչի՞ համար

Խ

Խաղալիկ	Խաղալիք
Խենդ	Խենթ
Խնճոյք	Խնջոյք
Խորագննիս, մանրագննիս	Խորագնիս, մանրագնիս

Կ

Կառուցանել, կառոյց	Կառուցել, կառուցեց
Կեանքի սղութիւն(cherté de vie)	Ապրուստի սղութիւն
Կեսուրմայր, կեսուրհայր	Կեսուր, կեսրայր
Կը թուի որ, կը կարծեմ որ, կ'երեւի որ, կ'ենթադրեմ որ...	Կը թուի թէ, կը կարծեմ թէ, կ'երեւի թէ, կ'ենթադրեմ թէ...

Հ

Համարեա՛, համարեայ	Համարեա
Հէքիաթ, հէքեաթ	Հէքիաթ

Մ

Մեծ հայր, մեծ մայր (անջատ)	Մեծհայր, մեծմայր (միացած)
Միմիանց	Միմեանց
Միջնեմատ	Միջնամատ

Յ

Յստակեցնել, յստակեցում	Յստակացնել, յստակացում
------------------------	------------------------

Շ


Շատ անգամներ	Շատ անգամ, բազմիցս
--------------	--------------------

Շնորհակալ (ըլլալ) մեկուն	Շնորհակալ (ըլլալ) մեկէն
Շրթունք-շրթունքներ	Շուրթ-շուրթեր (կամ շրթունք՝ յոգնակի)
Ռ	
Ոչ միայն...այլ, ոչ թէ միայն...այլ, ոչ թէ...այլեւ	Ոչ միայն...այլեւ, ոչ թէ...այլ
Որոշ անձեր	Կարգ մը անձեր
Որմով	Որով
Պ	
Պահուան	Պահի(ն), պահու(ն)
Պոլսեբնակ	Պոլսաբնակ
Պտըտիլ	Պտտիլ
Ջ	
Ջլեպինդ	Ջլապինդ
Ջլեբաց	Ջլաբաց
Ս	
Սուղ գին (վճարել)	Բարձր գին, թանկ (վճարել)
Սուղ կեանք (vie chère)	Սուղ ապրուստ
Տ	
Տեղեակ ոճիրէն	Տեղեակ ոճիրին, տեղեկանալ ոճիրին, ստիկաններէն տեղեկանալ ոճիրին
Ր	
Րաֆֆի	Ռաֆֆի

Ծալլել, փետտել, փտտիլ, սպաննել	Ծալել, փետել, փտիլ, սպանել
Օրեկան, ամսական	Օրական, ամսական, բայց՝ տարեկան

Գրաբար բառեր, ոճեր եւ ասոյթներ

Աշխարհաբարը զանազան կապերով կը շարունակէ առնչուիլ գրաբարին, յատկապէս բառերով, բառակապակցութիւններով, ասոյթներով ու դարձուածքներով, որոնց ճիշդ ու չափաւոր կիրարկութիւնը վայելչօրէն կը համեմէ մեր արդի լեզուն եւ որոնք, սակայն, յաճախ սխալ կը կիրարկուին:



Ականւտ-անուանւտ
Ամենայն դէպս



Յականւտ-յանուանւտ
Յամենայն դէպս

Աւուր պատշաճի	Յաւուր պատշաճի
Ակ ընդ ական	Ակն ընդ ական
Անձեռնամխելի	Անձեռնմխելի
Ատամ ընդ ատաման	Ատամն ընդ ատաման
Ափ ափոյ, յափ ափոյ	Ափ յափոյ կամ ափյափոյ
Եղբայրք	Եղբարք
Ըտ կոչել	Յետս կոչել
Ըստ արժանւուն, արժանաւոյն	Ըստ արժանւոյն
Ըստ ինձ	Ըստ իս, ըստ ինձի
Թող զկանայս եւ զմանկտիք(ս)	Թող զկանայս եւ զմանկտի
Ի բերանէ քումմէ	Ի բերանոյ քումմէ
Ի գարմանք (յարգանք)	Ի գարմանս (յարգանս)
Ի գուր տեղ, գուր տեղ	Ի գուր
Ի ժամուն եւ տարածամուն	Ի ժամու եւ տարածամու
Ի ծագիլ արեգական...	Ի ծագել արեգական...
Ի հետեւանք	Ի հետեւանս
Ի մասնաւորէ	Ի մասնաւորի
Ի մէջ այլոց	Ի միջի այլոց
Ի շնորհիլ	Շնորհիլ
Ի ուրախութիւն	Յուրախութիւն
Ի պահանջեալ հարկին	Ի պահանջել հարկին
Ի պէտքս եւ յումպէտքս	Ի պէտս եւ յումպէտս
Ի սփիւռք եւ ի հայրենիք	Ի սփիւռս եւ ի հայրենիս
Ի ցոյց մարդոց	Ի ցոյց մարդկան
Ի օգուտ	Յօգուտ
Խորհուրդ մարդկանց...	Խորհուրդ մարդկան...
Ձայն բարբառոյ անապատի	Ձայն բարբառոյ յանապատի
Յաջս մարդկան	Յաջս մարդկան (մարդոց աչքին առջել՝ դիմաց)
Ոտնկայս, ոտնկաց, հոտնկաց	Յոտնկայս
Սպաս դնել	Ի սպաս դնել
Սրբութեան սրբոց	Սրբութիւն սրբոց

Պատրաստեց եւ լեզուական ուղեցոյցի վերածեց՝ Վարուժ Թէւալէեան

Օգտագործուած աղբիւրներ՝

- Արմենակ Եղիայեանի լեզուաբանական հետազօտութիւններ եւ հանրային քննարկումներ:
- Յակոբ Զոլաքեանի «Գործնական Հայերէն» ուղեցոյց: